



Վլադիմիր Սմոլև Վահե Ղուկասյան

Մոսկվա

Երևան

**Հայ-ռուսական հարաբերություններն
անկախության շրջանում.**

Համառոտ ժամանակագրություն

**Հայ-ռուսական հարաբերություններն
անկախության շրջանում.**

Համառոտ ժամանակագրություն

Երևան 2018

Վլադիմիր Սմոլև

Վահե Ղուկասյան

**Հայ-ռուսական հարաբերությունները անկախության
շրջանում. Համառոտ ժամանակագրություն**

Խմբագիրներ՝ Աշխեն Մուշեղյան, Շուշան Հարությունյան

2017 թվականին լրացել է Հայաստանի և Ռուսաստանի
միջև դիվանագիտական հարաբերությունների
25-ամյակը: Սույն ուսումնասիրությունում ներկայացված
են հայ-ռուսական հարաբերությունների հիմնական
իրադարձությունները՝ ինչպես քաղաքական, այնպես էլ
տնտեսական ոլորտներում:

Ուսումնասիրությունը հրատարակվել է «Իրազեկ
քաղաքացիների միավորում» խորհրդատվական
հասարակական կազմակերպության աջակցությամբ:

Բովանդակություն

Նախաբան	4
Հայաստանի և Ռուսաստանի հետխորհրդային քաղաքական և տնտեսական փոխհարաբերությունները	5
Կարևորագույն իրադարձությունների կարճ ամփոփում	11
Պետության ղեկավարների պետական և պաշտոնական այցերը	17
Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրված փաստաթղթերը 25-ամյա դիվանագիտական հարաբերությունների ընթացքում	23
Հայ-ռուսական հարաբերությունների հիմնական տնտեսական ցուցանիշները	30
Հայ-ռուսական առևտուրը	33
Միգրացիոն գործընթացներ	37

Նախաբան

Նախագծի հեղինակներն ուրախ են տեղեկացնել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունների պատմության ժամանակագրական հետազոտության՝ տվյալների բազայի ստեղծման մասին: Ուսումնասիրությունն ընդգրկում է ԽՍՀՄ փլուզումից մինչև մեր օրերը ներառող ժամանակաշրջանը:

Սույն աշխատանքում փորձել ենք հնարավորինս ամբողջական կերպով և օբյեկտիվորեն ներկայացնել ՀՀ և ՌԴ քաղաքական և տնտեսական 25-ամյա հարաբերությունների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը:

Այս հետազոտությունը չի հետապնդում այս կամ այն իրադարձություններին գնահատական տալու նպատակ, այլ ներկայացնում է միայն պատմական փաստեր և փաստաթղթեր, որոնք հայ-ռուսական հարաբերությունների մաս են կազմում՝ հնարավորություն ընձեռելով հետազոտողներին, լրագրողներին և ոլորտով հետաքրքրվող մասնագետներին օգտագործել հավաքված տեղեկություններն ուսումնասիրելու և հետագայում սեփական աշխատանքներում օգտագործելու նպատակով:

Հայաստանի և Ռուսաստանի հետխորհրդային քաղաքական և տնտեսական փոխհարաբերությունները

ԽՍՀՄ փլուզումից հետո 20-րդ դարի 90-ական թվականների սկզբին հայ-ռուսական հարաբերությունների կայացումն ընթանում էր բավական բարդ պայմաններում: Ռուսաստանը, որը երկբևեռ աշխարհի փլուզումից հետո կորցրել էր մի շարք շրջաններում իր նախկին ազդեցությունը, կանգնած էր նոր աշխարհակարգում իր տեղը գտնելու խնդրի առաջ: Կային սպասումներ, որ ռուսական արտաքին քաղաքականության արմատական շրջադարձը արևմտյան երկրների հետ առճակատումից դեպի նրանց հետ մերձեցում կփոխի Արևմուտքի վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ և ՌԴ-ի համար կապահովի նրանց աջակցությունն ու տնտեսական օգնությունը:

Հայաստանն այս ժամանակաշրջանում գտնվում էր բարդ դրության մեջ՝ պայմանավորված Թուրքիայի և Ադրբեյջանի կողմից շրջափակմամբ: Ռուսաստանի հետ հարաբերությունները հատուկ տեղ էին զբաղեցնում Երևանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների շարքում, ինչը պայմանավորված է հինավուրց քաղաքական, տնտեսական և ռազմական կապերով, Ռուսաստանի և Հայաստանի ավանդական երկարաժամկետ հարաբերություններով:

Հայաստանի և Ռուսաստանի ռազմական համագործակցությունն ապահովում է Ռուսաստանի ներկայությունը Հարավկովկասյան տարածաշրջանում, իսկ երկկողմ պայմանագրի համաձայն, ՌԴ դաշնային անվտանգության ծառայության Սահմանապահ վարչությունն իրականացնում է Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի սահմանի պահպանությունը:

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև քաղաքական երկխոսության պայմանագրային հիմքը դրվել է անմիջապես Խորհրդային Միության փլուզումից հետո. 1991 թվականի դեկտեմբերի 29-ին ստորագրվել է *Բարեկամության, համագործակցության ու փոխադարձ անվտանգության մասին* պայմանագիրը: ՀՀ և ՌԴ միջև միջազգային սկզբունքների հիման վրա դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թվականի ապրիլի 3-ին՝ համապատասխան *Արձանագրության* ստորագրմամբ: ՀՀ և ՌԴ միջև միջպետական հարաբերությունների պայմանագրաիրավական հիմքի ձևավորումն

իրականացվել է 1992-1995թթ. միջպետական պատվիրակությունների բանակցություններով, կողմերի միջև ստորագրվել են ավելի քան 90 երկկողմ պայմանագրեր և համաձայնագրեր:

Երկրների միջև միջպետական հարաբերությունների հիմք ընդունված է համարել *Բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին մեծ պայմանագիրը*, որը ստորագրվել է 1997 թվականի օգոստոսի 29-ին:

Հայ-ռուսական միջպետական հարաբերությունները 1991-1999 թթ. անցել են երկու փուլ. 1991-1996 թվականների շրջանը բազմապրոֆիլ փոխգործակցության հաստատման ժամանակահատվածն է, 1997-1999 թվականները՝ հարաբերությունների զարգացման և հետագա համագործակցության ընդլայնման համար հիմքերի ձևավորման հատվածը: 1990-ական թվականներին հայ-ռուսական հարաբերությունների զարգացումն ու ակտիվացումը կրում էին փոխշահավետ բնույթ՝ դարձել էին տարածաշրջանում Մոսկվայի ազդեցության պահպանման և ուժեղացման կարևոր գործոն, իսկ Հայաստանին հնարավորություն էին տվել ձեռք բերել հզոր դաշնակից:

2000-ականների ընթացքում Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունները շարունակեցին ամրապնդվել տարբեր ուղղություններով: Տեղի էին ունենում նախագահների, խորհրդարանների ղեկավարների, վարչապետների, արտգործնախարարների, պաշտպանության նախարարների փոխադարձ այցեր և հանդիպումներ: Կողմերը շարունակում էին փոխգործակցել հայ-ռուսական հարաբերությունների հետագա զարգացման և տարածաշրջանային զարգացման հարցերում: Հայաստանն ակտիվորեն սինքրոնացնում էր բազմաթիվ կարևոր միջազգային հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը Մոսկվայի հետ:

Հայաստանի տարածքում տեղակայված է ռուսական 102-րդ ռազմաբազան: Ձևավորված է միացյալ հայ-ռուսական զորախումբ: Հարկ է նշել, սակայն, որ Հայաստանում ռուսական բազայի առկայությունը ոչ միանշանակ է ընկալվում հայ հասարակության կողմից, ինչը նաև կապված է ռազմաբազայի զինծառայողների մասնակցությամբ տեղի ունեցած աղմկոտ ողբերգական միջադեպերի հետ:

Հայաստանի անվտանգության ապահովման համատեքստում ակտիվորեն զարգացել է Հայաստանի ռազմատեխնիկական համագործակցությունը Ռուսաստանի հետ՝ ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես

էլ ՀԱՊԿ շրջանակում: Այս ամենը հիմք է տվել պաշտոնական Երևանին 2007թ. փաստաթղթորեն արձանագրել, որ Հայաստանի ռազմաքաղաքական անվտանգության ապահովման գլխավոր բաղադրիչ են հանդիսանում Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունները, պաշտպանական և ռազմատեխնիկական ոլորտներում համագործակցությունը, երկու երկրների միջև ռազմավարական գործընկերությունը և անդամակցումը ՀԱՊԿ-ին: Ռուսաստանի հետ ռազմական համագործակցությանը զուգահեռ, Հայաստանն ինտենսիվորեն համագործակցում է նաև ՆԱՏՕ-ի հետ և ներկայացված է մի քանի խաղաղապահ առաքելություններում:

2000-ական թվականներից նկատելիորեն ակտիվացել է Ռուսաստանի միջնորդական դերը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում: Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների բանակցությունները շատ հաճախ տեղի են ունենում ՌԴ նախագահի անձնական միջնորդությամբ:

ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունում ասվում է, որ Ռուսաստանի հետ փոխհարաբերությունները կրում են ռազմավարական բնույթ, ինչը պայմանավորված է Հայաստանի անվտանգության ապահովման գործում Ռուսաստանի կարևոր դերով, լայնածավալ առևտրատնտեսական համագործակցությամբ, ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ՌԴ ունեցած դերակատարմամբ, ինչպես նաև Ռուսաստանում հայկական ստվար համայնքի առկայությամբ (2016 թվականի դրությամբ՝ շուրջ 1,8 միլիոն մարդ):

Ռուսաստանը Հայաստանի առաջնային տնտեսական գործընկերներից մեկն է. Հայաստանի արտաքին առևտրային հաշվեկշռում ՌԴ բաժինը կազմում է 24 տոկոս (համաձայն 2007-2015թթ. տվյալների): Ըստ մաքսային վիճակագրության տվյալների, 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Ռուսաստանի և Հայաստանի արտաքին առևտրային շրջանառությունը կազմել է 678,8 միլիոն ԱՄՆ դոլար, այդ թվում՝ ռուսական արտահանումը կազմել է 421,5 միլիոն դոլար, ներմուծումը՝ 257,3 միլիոն դոլար: Ռուսաստանը Հայաստան է արտահանում հիմնականում հանքային արտադրանք, սննդամթերք և գյուղատնտեսական հումք, մեքենաներ, սարքավորումներ և տրանսպորտային միջոցներ, մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, քիմիական արդյունաբերության արտադրանքներ, կաուչուկ, թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր: Հայաստանից Ռուսաստան

հիմնականում արտահանվում են մթերային ապրանքներ և գյուղատնտեսական հումք, մեքենաներ, սարքավորումներ, թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր, տեքստիլ, տեքստիլային իրեր և կոշիկներ:

Հայաստանի տնտեսությունում 1991 թվականից կուտակված ռուսական կապիտալի ներդրումների ծավալը գերազանցում է չորս միլիարդ դոլարը: Ռուսական հիմնական ներդրումներն ուղղվում են էներգետիկ, բանկային, լեռնահանքարդյունաբերական և շինարարական ոլորտներ, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ: Խոշորագույն նախագծերի թվում են «Գազպրոմ» ԲԲԸ մասնակցությամբ գազաէներգետիկ օբյեկտների կառուցումը, «Վիմպելկոմ» ԲԲԸ կողմից կապի ազգային օպերատոր «Արմենթել» ակտիվների գնումը, ինչպես նաև «Ռուսական ալյումինիում» միացյալ ընկերության կողմից «Ռուսալ Արմենալ» գործարանի արդիականացումը, «Ինտեր ՌԱՕ ԵԷՍ» ԲԲԸ կողմից Սևան-Հրազդան ՀԷԿ-ի և Հրազդանի ԶԷԿ-ի էներգահզորությունների արդիականացումը: Որպես պետական պարտքի ամբողջական մարում, Հայաստանը ռուսական կողմին է փոխանցել հինգ ձեռնարկություններ: Ռուսաստանին 93 միլիոն դոլարի չափով պարտքը մարելու համար գույքի փոխանցման մասին համաձայնագիրը, որը ստացել է «Գույք պարտքի դիմաց» անվանումը, ստորագրվել է 2002 թվականի հուլիսի 17-ին: Դրանով նախատեսվում էր Ռուսաստանին փոխանցել «Մարս» ՓԲԸ-ի (գնահատվել է 56,29 մլն դոլար), «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի (2,75 մլն դոլար), «Երևանի կառավարման ավտոմատացված համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի (3,37 մլն դոլար), «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի (0.35 մլն դոլար) բաժնետոմսերի 100 տոկոսը, ինչպես նաև Հրազդանի ԶԷԿ-ի ունեցվածքային համալիրը: 2000-ական թվականների այս իրադարձություններն առաջացրեցին որոշակի հասարակական ռեզոնանս, որը կապված էր պետական պարտքի չափի և փոխանցված ձեռնարկությունների իրական արժեքի անհամապատասխանության հետ:

Հայաստանում ռուսական կապիտալով ձեռնարկությունների և առանձին ստորաբաժանումների (ավելի քան 1300) տեսակարար կշիռն օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ գործող ձեռնարկությունների ընդհանուր թվում կազմում է 27,6 տոկոս:

2015 թվականի հունվարի 2-ին Հայաստանը միացել է Եվրասիական տնտեսական միությանը: Հայկական իշխանական շրջանակների որոշ

ներկայացուցիչների խոսքով, ԵԱՏՄ-ին Հայաստանի միանալու որոշումը թելադրված է եղել, ի թիվս այլի, տարածաշրջանում առկա ռազմական հակամարտությամբ պայմանավորված մարտահրավերների և անվտանգության սպառնալիքների հետ կապված նպատակահարմարությամբ: Սակայն, միևնույն ժամանակ, ԵԱՏՄ-ին ինտեգրվելու որոշումը քննադատության է ենթարկվել ոչ միայն ընդդիմության, այլև իշխող որոշ շրջանակների կողմից: Դատելով այն ժամանակվա մամուլի հաղորդումներից, ԵԱՏՄ օգտին որոշումն անակնկալ է եղել իշխանության բազմաթիվ ներկայացուցիչների համար, որոնք ավելի վաղ բանակցություններ են վարել Եվրամիության հետ Ասոցացման համաձայնագրի շուրջ:

Հայ-ռուսական երկկողմ հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական հասարակության վերաբերմունքի հետազոտությունները, իրենց հերթին, վկայում են 2014 թվականից հետո նկատվող բացասական փոփոխությունների մասին: Մասնավորապես, «Ինտեգրացիա և զարգացում» հետազոտական վերլուծական հասարակական կազմակերպության և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի համատեղ հետազոտական խմբի՝ 2013թ. իրականացրած սոցիոլոգիական հետազոտությունը ցույց է տվել, որ «Ո՞ւմ հետ, ըստ Ձեզ, Հայաստանը պետք է զարգացնի հարաբերություններն առաջին հերթին, Ռուսաստանի, թե՛ Եվրոպական Միության» հարցին հարցվողների 67.3 տոկոսը պատասխանել է՝ Ռուսաստանի: Հարցերին, թե «Ո՞վ է առավել նախընտրելի դաշնակից Հայաստանի համար թուրքական և ադրբեջանական ռազմական վտանգի դեմ» և «Ո՞վ է Հայաստանի առավել վստահելի դաշնակիցը դարաբաղյան հակամարտությունում, Ռուսաստանը, թե՛ Եվրամիությունը», Ռուսաստանի հետ համագործակցության կողմ են արտահայտվել հարցվածների, համապատասխանաբար, 72.3 և 63.8 տոկոսը: Սակայն ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից, Ռուսաստանի կողմից Ադրբեջանին ժամանակակից հարձակողական սպառազինության մատակարարումներից, 2016 թվականի ապրիլյան պատերազմի իրադարձություններից հետո հայ հասարակության տրամադրությունները լրջորեն փոխվել են: Այսպես, 2017 թվականի ամռանը Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ հարցվածների ընդամենը 34.33 տոկոսն է Ռուսաստանին համարում Հայաստանի ռազմավարական գործընկեր, իսկ 30.56 տոկոսը այդպես չի կարծում: 25.67 տոկոսը կարծում է, որ Ռուսաստանն

ապահովում է Հայաստանի անվտանգությունը, իսկ 30.56 տոկոսը համաձայն չէ դրա հետ: Հարցվածների շուրջ 56.33 տոկոսը բացասական է համարում Ռուսաստանի ազդեցությունը դարաբաղյան հակամարտության շուրջ ընթացող բանակցային գործընթացի վրա, և միայն 40.11 տոկոսն է այդ ազդեցությունը դրական համարում: Էլ ավելի ծայրահեղ է ՀՀ քաղաքացիների վերաբերմունքը Համատեղ անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) նկատմամբ, որին անդամակցում են Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը, Հայաստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: Այսպես, հարցվածների ընդամենը 15.78 տոկոսն է կարծում, որ ՀԱՊԿ-ը ապահովում է Հայաստանի անվտանգությունը, իսկ 41.33 տոկոսը այդպես չի կարծում: Բացի սա, հարցվածների 63.44 տոկոսը կարծում է, որ ՀԱՊԿ-ը չի աջակցի Հայաստանին, եթե Ադրբեյջանը պատերազմ սկսի Հայաստանի դեմ, և ընդամենը 31.22 տոկոսն է հավատում ՀԱՊԿ օգնությանը:

Այս հարցերին զուգահեռ, զարգանում է հայ-ռուսական հումանիտար փոխգործակցությունը: Հայաստանի առաջավոր կրթական հաստատություններից է դարձել Հայ-ռուսական (Սլավոնական) պետական համալսարանը, որը հիմնադրվել է 1997 թվականին: 2009 թվականի ապրիլին Երևանում բացվել է Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնը:

Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերությունների բնույթի և մակարդակի ցուցիչ է դարձել նաև 1995 թվականին ՌԴ կողմից «Արևմտյան Հայաստանի տարածքում» Հայոց ցեղասպանության ճանաչումը, ինչպես նաև ՌԴ նախագահ Վ. Պուտինի այցը Երևան Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակում: Երևանում Պուտինը հայտարարեց, որ «Ռուսաստանի դիրքորոշումը եղել և մնալու է հետևողական՝ մենք կարծում ենք, որ մարդկանց զանգվածային սպանություններին չկա և չի կարող լինել ոչ մի արդարացում»:

Կարևորագույն իրադարձությունների կարճ ամփոփում

1991 թվական, դեկտեմբեր – Ռուսաստանը (ՌԽԴՍՀ) ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը:

1993 թվական, ապրիլի 30 – ՄԱԿ Անվտանգության խորհուրդը 3205-րդ նիստին միաձայն ընդունում է N°822 Հռչակագիրը ԼՂ-ում ռազմական գործողությունների անհապաղ դադարեցման վերաբերյալ:

1995 թվական, ապրիլի 14 – ՌԴ Պետական դուման հանդես է գալիս «1915-1922թթ. Հայոց ցեղասպանության դատապարտման մասին» հայտարարությամբ:

1999 թվական, ապրիլի 14 – Երկու ռուս սահմանապահներ՝ զինված ինքնաձիգներով, անսթափ վիճակում, Գյումրու շուկայում անկանոն կրակ բացեցին տեղի բնակիչների ուղղությամբ, ինչի հետևանքով զոհվեց երկու մարդ, ևս ինը հոգի վիրավորվեցին: Սահմանապահները՝ եֆրեյտոր Ալեքսանդր Կամենևը և շարքային Դենիս Պոպովը զինաթափվեցին շուկայի աշխատակիցների կողմից և ներկայացվեցին ոստիկանություն: Քննությունն ընթացավ մի քանի ամիս, ողջ ընթացքում Կամենևը և Պոպովը պահվեցին Գյումրիի քննչական մեկուսարանում: Հայաստանի և Ռուսաստանի դատական մարմինների միջև կայացած համաձայնությամբ դատական գործընթացը տեղի ունեցավ Հայաստանում, հայ դատավորի նախագահությամբ, դատավարական գործողություններն իրականացվեցին հայկական օրենսդրության համաձայն: 1999 թվականի դեկտեմբերի 27-ին դատարանը Կամենևին և Պոպովին դատապարտեց 15 և 14 տարվա ազատազրկման խիստ ռեժիմի գաղութում:

1999 թվական, հոկտեմբերի 27 – ՀՀ Ազգային ժողովը դարձավ աննախադեպ ահաբեկչության թիրախ. խորհրդարանի հերթական նիստի ժամանակ, կառավարության հարց ու պատասխանից առաջ նիստերի դահլիճ ներխուժեցին զինված անձինք: Ահաբեկիչները հայտարարեցին, որ պետական հեղաշրջում են իրականացնում: Նիստին ներկա լրագրողների վկայությամբ, ահաբեկիչները կրակ բացեցին վարչապետ Վազգեն Սարգսյանի և ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանի ուղղությամբ: Նրանք երկուսն էլ զոհվեցին: Ահաբեկչության հետևանքով զոհվեցին նաև ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանը և Ռուբեն Միրո-

յանը, նախարար Լեոնարդ Պետրոսյանը, պատգամավորներ Արմենակ Արմենակյանը և Միքայել Կոտանյանը: Լս մեկ պատգամավոր՝ Հենրիկ Աբրահամյանը, մահացավ սրտի նոպայից: ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը, որը հոկտեմբերի 30-ին գտնվում էր Հայաստանում 5-ժամյա այցով, մասնակցեց խորհրդարանում զոհված ականավոր քաղաքական գործիչներին նվիրված սգո արարողություններին:

2002 թվական, նոյեմբեր – Հայաստանի կոմունիստական կուսակցությունը հանդես է գալիս Ռուսաստանի և Բելառուսի միասնական պետությանը Հայաստանի միանալու անհրաժեշտության մասին հայտարարությամբ:

2003 թվական, հուլիսի 11 – Գյումրիում տեղակայված ռուսական ռազմաբազայի տարածք են փորձում ներխուժել մի քանի անձինք: Ականատեսների վկայությամբ, նրանք հանդիպել են զորամասի հերթապահի դիմադրությանը, առաջացել է ծեծկռտուք, ինչից հետո գործի է դրվել հրազեն: Միջադեպի հետևանքով սպանվել են Գյումրի քաղաքի բնակիչներ Արթուր Պողոսյանը և Արմեն Արոյանը: Լս երկու հոգի հրազենային վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Միջադեպից հետո ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Իվանովի հրամանով զբաղեցրած պաշտոնից ազատվում է Գյումրու 102-րդ ռազմաբազայի հրամանատար գեներալ-մայոր Ալեքսանդր Տիտովը:

2008 թվական, մարտի 14 – ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 86-րդ լիազումար նիստում Ռուսաստանը դեմ է քվեարկում «Դրությունը Ադրբեջանի օկուպացված տարածքներում» ՄԱԿ ԳԱ 62243 Հռչակագրին, որը հայտարարում էր «միջազգայնորեն ճանաչված սահմանների շրջանակում Ադրբեջանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը հարգելու և աջակցելու» մասին և պահանջում «անհապաղ, ամբողջությամբ և անվերապահորեն դուրս բերել հայկական բոլոր ուժերը Ադրբեջանի Հանրապետության օկուպացված տարածքներից», ինչպես նաև հայտարարում էր, որ «ոչ մի պետություն չպետք է օրինական ճանաչի այն իրավիճակը, որը ստեղծվել է Ադրբեջանի Հանրապետության տարածքների օկուպացիայի արդյունքում, և չպետք է օժանդակի կամ նպաստի այդ իրավիճակի պահպանմանը»:

2013 թվական, ապրիլի 7 – Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի մոտ՝ ռուսական տանկային պոլիգոնի տարածքում, զոհվում են գյուղի բնակիչներ, 2001 թվականին ծնված Ա.Մկրտչյանը և 1997 թվականին

ծնված Մ.Գևորգյանը: Երեխաները հոր հետ ոչխարներին էին հետևում, երբ տեսել են նռնակների մնացորդներ, խփել են դրանք քարերին, նռնակները պայթել են: Դատախազության վարկածով, երեխաներն առանց թույլտվության կրակադաշտում մետաղական թափոններ են հավաքել: Հետաքննության արդյունքում ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել:

2013 թվական, սեպտեմբեր – Վիլնյուսում նոյեմբերին կայանալիք ԵՄ Արևելյան գործընկերության գագաթաժողովում պետք է տեղի ունենար Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև Ասոցացման համաձայնագրի ստորագրումը: Սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի այցը Մոսկվա և հանդիպումը ՌԴ նախագահի հետ: Դրանից հետո Սարգսյանը հայտարարեց Եվրասիական տնտեսական միությանը միանալու ՀՀ որոշման մասին՝ այդպիսով փակելով ԵՄ հետ համաձայնագրի հարցը: Դրան հաջորդեցին բողոքի ցույցեր Երևանում, այդ թվում՝ Ռուսաստանի դեսպանատան առջև:

2013 թվական, դեկտեմբերի 2 – Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների միջև համաձայնագիր է ստորագրվում Հայաստանին բնական գազ, նավթամթերք և չմշակված բնական ալմաստներ մատակարարելու ոլորտում համագործակցության մասին: Նույն օրը՝ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Հայաստան կատարած այցի ընթացքում Երևանում տեղի են ունենում բողոքի ցույցեր, ոստիկանությունը բերման է ենթարկում տասնյակ խաղաղ ցուցարարների:

2013 թվական, դեկտեմբեր – Հայաստանում ընդդիմությունը հանդես է գալիս ցույցերով՝ ընդդեմ գազի մատակարարման ոլորտում ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրի վավերացման: Ըստ այդ համաձայնագրի, ռուսական պետական «Գազպրոմ» կորպորացիային, որին պատկանում էր «Հայռուսգազարդ»-ի բաժնետոմսերի 80 տոկոսը, անցնում է նաև մնացյալ քսանը: Բացի դա, Հայաստանը մինչև 2043 թվականը զրկվում է այլ ընկերությունների միջոցով գազ ներկրելու և վառելանյութի մատակարարման պայմանները փոխելու հնարավորությունից:

2014 թվական, մարտի 28 – ՄԱԿ Գլխավոր ասամբլեայում Հայաստանն աջակցում է Ռուսաստանին՝ դեմ քվեարկելով այն Հռչակագրին, որով մարտի 16-ի հանրաքվեով Ղրիմի միացումը Ռուսաստանին ճա-

նաչվում էր անօրինական:

2013-2014թթ. – Ընթանում է ՀՀ քաղաքացի Հրաչյա Հարությունյանի՝ «Կամազի» վարորդի աղմկոտ դատավարությունը: Հարությունյանի մեղքով տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով Նոր Մոսկվայում զոհվել էր 18 մարդ: Վթարի վրա մեծ ուշադրություն էր սևեռվել ոչ միայն զոհերի մեծ քանակի, այլև կից հանգամանքների բերումով: Հայ հանրությանը վրդովեցրել էր, օրինակ, այն, որ Հարությունյանին դատարան էին ներկայացրել կանացի ծաղկավոր խալաթով: Խալաթի հարցը գրեթե երկրորդ պլան էր մղել բուն քրեական գործը: Հրաչին նման հագուստով դատարան բերողներին պատասխանատվության ենթարկելու պահանջով հանդես էր եկել նույնիսկ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը: Հարությունյանը Ռուսաստանի դատարանի կողմից դատապարտվեց 7 տարվա ազատազրկման, սակայն հայկական կողմի հայցով արտահանձնվեց և պատիժը կրում է Հայաստանում:

2015 թվական, հունվարի 2 – Հայաստանը միանում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին:

2015 թվական, հունվարի 12 – Գյումրիում տեղակայված 102-րդ ռազմաբազայի զինծառայող Վալերի Պերմյակովը սպանում է Գյումրիում բնակվող Ավետիսյան ընտանիքի 7 անդամներին՝ Սերյոժա Ավետիսյանին (1961թ. ծնված), Հասմիկ Ավետիսյանին (1959), նրանց երեխաներ Աիդա Ավետիսյանին (1979), Արմեն Ավետիսյանին (1981), հարս Արաքսյա Պողոսյանին (1990), վերջիններիս երկամյա դուստր Հասմիկ Ավետիսյանին: Ընտանիքի՝ ողջ մնացած միակ անդամը՝ վեց ամսական Սերյոժա Ավետիսյանը, ստացված վիրավորումներից մահացավ հունվարի 19-ին: Հանցագործության փաստով հարուցվեց քրեական գործ ՀՀ ՔՕ 104 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (երկու և ավելի անձանց սպանություն): Հունվարի 13-ի գիշերը ռուս սահմանապահները Թուրքիայի սահմանն անցնելու փորձի ժամանակ, Բայանդուր գյուղի մոտակայքում բռնեցին Պերմյակովին:

Նույն օրը Վալերի Պերմյակովը խոստովանեց Ավետիսյան ընտանիքի սպանությունը: Նա հայտնեց, որ ռազմաբազան լքել է քաղաքում զբոսնելու համար և պատահաբար հայտնվել է Ավետիսյանների տանը: Հունվարի 15-ին Գյումրիում տեղի ունեցած զանգվածային ցույցեր, որոնք, ի վերջո, վերածվեցին ոստիկանության հետ բախումների: Ցուցարարներ

էին հավաքվել նաև Գյումրիում գտնվող ռուսական հյուպատոսության առջև: Դիվանագիտական ներկայացուցչության ուղղությամբ նետվում էին ձվեր, քարեր և այլ առարկաներ: Պերմյակովի հանձնումը հայկական իրավապահ մարմիններին նախատեսված էր միջպետական համաձայնագրերով: Ըստ այդմ, ռուսական ռազմաբազայի ներկայացուցիչների կողմից Հայաստանի տարածքում կատարվող հանցագործությունները հետաքննում են Հայաստանի համապատասխան մարմինները: 2016 թվականի օգոստոսի 23-ին Գյումրու դատարանը Վալերի Պերմյակովին դատապարտեց ցմահ ազատազրկման՝ մեղավոր ճանաչելով նրան Ավետիսյան ընտանիքի յոթ անդամների սպանության, ավազակային հարձակման և սահմանն ապօրինի հատելու փորձի մեջ:

2015 թվական, ապրիլի 24 – Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն այցելում է Երևան և մասնակցում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառմանը:

2015 թվական, հունիս-հուլիս – Տեղի են ունենում բողոքի զանգվածային ցույցեր Հայաստանում, որոնց պատճառը էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումն էր՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման համաձայն: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ընկերության բաժնետոմսերի 100 տոկոսը պատկանում էր ռուսական պետական «Ինտեռ ՌԱՕ ԵԷՍ» ՓԲԸ-ին) ընկերությունը պատրաստվում էր բարձրացրել էլեկտրաէներգիայի ցերեկային սակագինը մոտ քսան տոկոսով: Ցույցերի արդյունքում սակագների բարձրացումը փոխհատուցվեց:

2015 թվական, նոյեմբեր – «Արդար Ռուսաստան» կուսակցությունը ՌԴ Պետական դումա է ներկայացնում Հայոց ցեղասպանությունը հրապարակայնորեն ժխտելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու մասին օրինագիծ: Օրինագիծը, որը առաջարկվել էր ռուս-թուրքական հարաբերությունների սրման ֆոնին, այդպես էլ քվեարկության չդրվեց:

2016 թվական, ապրիլի 1-5 – Շփման գծում բախումներ են սկսվում ԼՂՀ և Ադրբեյջանի զինված ուժերի միջև, որոնք ստացան «Ապրիլյան քաոսոյա պատերազմ» անվանումը: Մարտերը սկսվեցին ապրիլի 2-ի գիշերը և ինտենսիվորեն շարունակվեցին չորս օր: Հակամարտության կողմերը միմյանց մեղադրեցին կրակի դադարեցման ռեժիմի խախտման մեջ, ինչպես նաև հայտնեցին հրետանու, ավիացիայի մասնակցու-

թյամբ ինտենսիվ մարտական գործողությունների և հակառակորդին հասցված լուրջ վնասների մասին: Ապրիլի 5-ին կողմերը հայտարարեցին ռազմական գործողությունների դադարեցման մասին: Արցախյան և ադրբեջանական ուժերի շփման գծի ողջ երկայնքով կրակի դադարեցման վերաբերյալ երկկողմ համաձայնությունը կնքվեց Մոսկվայում Հայաստանի և Ադրբեջանի գլխավոր շտաբերի ղեկավարների հանդիպման ժամանակ՝ ՌԴ ԳՇ ղեկավարի մասնակցությամբ:

2016 թվական, ապրիլի 14 – Երևանում ՌԴ դեսպանատան մոտ տեղի ունեցան բողոքի ցույցեր՝ Ռուսաստանի կողմից Ադրբեջանին զենք վաճառելու դեմ: Ցուցարարները ձվեր և զինամթերքի բեկորներ նետեցին դեսպանատան ուղղությամբ: Հավաքվածները կոչ արեցին Հայաստանի իշխանությանը դուրս գալ Եվրասիական տնտեսական միությունից:

Պետության ղեկավարների պետական և պաշտոնական այցերը

ՀՀ նախագահների պետական և պաշտոնական այցերը Ռուսաստանի Դաշնություն

Լևոն Տեր-Պետրոսյան

1995 թվական, մարտի 16 – Պաշտոնական այց Մոսկվա: Քննարկվել են տնտեսական երկկողմ համագործակցության հարցերը, էներգետիկ ճգնաժամը Հայաստանում:



1997 թվական, օգոստոսի 25-28 – Լևոն Տեր-Պետրոսյանի պաշտոնական այցը Մոսկվա: Քննարկվել են տնտեսական և ֆինանսական երկկողմ համագործակցության հարցերը: Կայացել են ՀՀ նախագահի հանդիպումները ՌԴ առաջին փոխվարչապետ Ա. Չուբայսի, ԱԳ նախարար Ե. Պրիմակովի, Դաշնային խորհրդի նախագահ Ե. Ստրոկի և Պետական դումայի խոսնակ Գ. Սելեզնյովի հետ:

Ռոբերտ Քոչարյան

2000 թվական, սեպտեմբերի 25-26 – ՀՀ նախագահի պաշտոնական այցը Մոսկվա: Քննարկվել են երկու երկրների տնտեսական համագործակցությունը և անվտանգությունը:

2001 թվական, դեկտեմբերի 17 – ՀՀ նախագահի այցը Մոսկվա: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի և այլ ռուս պաշտոնյաների հետ Ռոբերտ Քոչարյանի բանակցություններում քննարկվել են երկկողմ հարաբերությունների հարցերը և ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները:

2003 թվական, հունվարի 16-18 – ՀՀ նախագահի պաշտոնական այցը Մոսկվա: Այցի շրջանակում տեղի է ունեցել Քոչարյանի հանդիպումը Վլադիմիր Պուտինի, վարչապետ Մ. Կապսյանովի, Պետդումայի նախագահ Գ. Սելեզնյովի հետ:



Բանակցությունների ընթացքում քննարկվել են քաղաքական, առևտրատնտեսական, ներդրումային, ռազմաքաղաքական և ռազմատեխնիկական ոլորտներում հայ-ռուսական ռազմավարական գործընկերության ակտուալ կողմերը: Քննարկվել է հայկական ձեռնարկությունների՝ Ռուսաստանի առջև ՀՀ ունեցած պարտքի դիմաց փոխանցման հարցը: Հատուկ ուշադրություն է դարձվել կապերի զարգացմանը կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում: Ռոբերտ Քոչարյանն առաջարկել է անցկացնել Ռուսաստանի տարի Հայաստանում և Հայաստանի տարի Ռուսաստանում:

Երկու երկրների առաջնորդները համաձայնեցրել են ԱՊՀ, ՀԱՊԿ և Հակաահաբեկչական հանձնաժողովի շրջանակներում համատեղ աշխատանքի մանրամասները, մտքեր են փոխանակել միջազգային և տարածաշրջանային հարցերի լայն շրջանակի վերաբերյալ, առաջին հերթին՝ ժամանակակից մարտահրավերների և սպառնալիքների դեմ պայքարի վերաբերյալ, Կովկասում տիրող իրավիճակի, ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարների շուրջ: Կողմերը հաստատել են ղարաբաղյան հակամարտությունը բացառապես խաղաղ միջոցներով, բոլոր կողմերի համար ընդունելի արդար հիմքերով, շուտափույթ կարգավորելու իրենց ձգտումը:

Սերժ Սարգսյան

2008 թվական, հունիսի 23-25 – ՀՀ նախագահի պաշտոնական այցը Ռուսաստան: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ հանդիպմանը քննարկվել են երկու երկրների միջև արտադրական և տեխնոլոգիական գործակցության ընդլայնման հեռանկարները, փոքր և միջին բիզնեսի ուղղությամբ համագործակցությունը, փոխադարձ ներդրումների զարգացումը:

Կողմերը քննարկել են նաև ԱՊՀ և ՀԱՊԿ ձևաչափերով փոխգործակցությունը և ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները: ՀՀ նախագահը հանդիպումներ է ունեցել նաև ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի և խորհրդարանի ղեկավարության հետ:

2011 թվական, հոկտեմբերի 23-25 – ՀՀ նախագահի պետական այցը Ռուսաստան: ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի հետ բանակցությունների արդյունքում ստորագրվել են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ հումանիտար ոլորտում համագործակցության մասին միջպետական համաձայնագիրը, դիվանագիտական ներկայացուցչություններին անշարժ գույքի փոխադարձ տրամադրման մասին համաձայնագիրը, ինչպես նաև համաձայնագիր երկու երկրների սպորտի նախարարությունների միջև երիտասարդությանն առնչվող հարցերում համագործակցության մասին, նաև այլ փաստաթղթեր: Հոկտեմբերի 25-ին Սերժ Սարգսյանը հանդիպել է ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ:

2017 թվական, մարտի 14-15 – ՀՀ նախագահի պաշտոնական այցը Մոսկվա: Մարտի 14-ին Սերժ Սարգսյանը ելույթ է ունեցել ՄԳԻՄՕ-ի դասախոսական կազմի և ուսանողների համար: Մարտի 15-ին ՌԴ նախա-



գահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկկողմ հարաբերությունները, ինչպես նաև դարաբաղյան հակամարտությունը: Երկու երկրների ղեկավարները բանակցությունների արդյունքում ընդունել են համատեղ հայտարարություն: ՀՀ նախագահը հանդիպել է նաև ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդևի հետ: Սարգսյանի այցը տեղի էր ունեցել ՀՀ և ՌԴ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի նախօրեին, որը նշվում էր ապրիլի 3-ին:



ՌԴ նախագահների պետական և պաշտոնական այցերը Հայաստան

Բորիս Ելցին

1994 թվական, հոկտեմբեր – ՌԴ նախագահի պաշտոնական այցը ՀՀ: Քննարկվել են Հայաստանի և Ռուսաստանի հարաբերություններին առնչվող մի շարք հարցեր:

Վլադիմիր Պուտին

2001 թվական, սեպտեմբերի 14-15 – ՌԴ նախագահի պաշտոնական այցը Երևան: Տեղի են ունեցել բանակցություններ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ: Պուտինը հանդիպել է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հետ: Բանակցությունների հիմնական առարկան տնտեսական խնդիրներն էին, մասնավորապես, Ռուսաստանի առջև Հայաստանի ունեցած պարտքի մարումը, որն այդ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմում էր 100 մլն ԱՄՆ դոլար: Երկու երկրների առաջնորդներն անդրադարձել են նաև դարաբաղյան հակամարտության խնդրին, «Կովկասյան քառյակի» հարցին և Կովկասում տիրող իրավիճակին ընդհանուր առմամբ: Քննարկվել են նաև Համատեղ անվտանգության պայմանագրի (ՀԱՊ, Հայաստանն այդ տարի նախագահում էր կառույցում) շրջանակում համատեղ աշխատանքի տարբեր կողմերը, ահաբեկչության դեմ պայքարի հարցերը, Մոսկվայում ԱՊՀ-ի հոբելյանական նստաշրջանի անցկացումը:

2013 թվական, դեկտեմբերի 2 – ՌԴ նախագահի պետական այցը Հայաստան: Այցի ընթացքում Վլադիմիր Պուտինն այցելում է Գյումրի, որտեղ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ տեսակապի միջոցով հետևում է Հրազդանի ԶԷԿ-ի հինգերորդ էներգաբլոկի գործարկմանը: Ավելի ուշ նախագահները մասնակցում են Հայ-ռուսական միջմարզային համաժողովին: Վլադիմիր Պուտինն այցելում է նաև Գյումրիի 102-րդ ռուսական ռազմաբազա: Երևանում կայանում են հայ-ռուսական բանակցություններ, որոնց արդյունքում նախագահների ներկայությամբ ստորագրվում է փաստաթղթերի փաթեթ: Պուտինի՝ Երևանում գտնվելու ժամերին տեղի են ունենում բողոքի ցույցեր, ոստիկանությունը բերման է ենթարկում տասնյակ ցուցարարների:

Դմիտրի Մեդվեդև

2008 թվական, հոկտեմբերի 20-21 – ՌԴ նախագահի պաշտոնական այցը Հայաստան: Տեղի են ունենում հայ-ռուսական պաշտոնական բանակցություններ, Ռուսաստանի հրապարակի բացումը Երևանում:

2010 թվական, օգոստոսի 20 – ՌԴ նախագահի պետական այցը Հայաստան: Ստորագրվում են մի շարք փաստաթղթեր, այդ թվում՝ Հայաստանում ռուսական ռազմաբազայի տեղակայման երկարացման, Հայկական ատոմակայանի էներգաբլոկների կառուցման մասին: Այցի արդյունքում երկրների ղեկավարների կողմից ընդունվում է համատեղ հայտարարություն: Փաստաթղթում, մասնավորապես, ընդգծվում է, որ Ռուսաստանն ու Հայաստանը հանդես են գալիս դարաբաղյան հակամարտության՝ բացառապես խաղաղ միջոցներով, բոլոր կողմերի համար ընդունելի արդար հիմքերով շուտափույթ կարգավորման օգտին:

Նախագահների ներկայությամբ երկու երկրների պաշտպանության նախարարները ստորագրում են Հայաստանում ռուսական ռազմաբազայի տեղակայման մասին պայմանագրի՝ 49 տարով երկարացման արձանագրություն: «Ռուսատոմի» ղեկավարի և Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից ստորագրվում է միջկառավարական համաձայնագիր Հայաստանի տարածքում ատոմակայանի նոր էներգաբլոկների կառուցման մասին: Ռուսաստանն ու Հայաստանը պայմանավորվում են նաև նոր առևտրային ներկայացուցչություններ հիմնադրել:

Երկկողմ այցերի համատեքստում հատկանշական է, որ ի տարբերություն նախագահների, որոնց փոխադարձ այցելությունները սկսվում են 1990-ական թվականների սկզբից, կառավարական պատվիրակությունների այցերը սկսվում են շատ ավելի ուշ՝ 2003 թվականից: ՀՀ ԱԳՆ տրամադրած տվյալների համաձայն, ՀՀ կառավարական պատվիրակությունները վարչապետերի գլխավորությամբ ընդհանուր առմամբ Ռուսաստան են այցելել 25 անգամ: Ընդ որում, մինչև 2008 թվականն այդ այցերի քանակն ընդամենը չորս է եղել: ՀՀ վարչապետերի՝ Ռուսաստան կատարած այցերի մեծ մասն աշխատանքային են, և միայն երեք այցերն են եղել պաշտոնական: Պաշտոնական այցերով Ռուսաստան են այցելել ՀՀ վարչապետեր Անդրանիկ Մարգարյանը (2004թ.), Սերժ Սարգսյանը (2007թ.) և Կարեն Կարապետյանը (2017թ.):

Հայաստանի և Ռուսաստանի միջև ստորագրված փաստաթղթերը 25-ամյա դիվանագիտական հարաբերությունների ընթացքում

Ստորև ներկայացնում ենք ՀՀ և ՌԴ արտաքին գործերի նախարարությունների կայքերում հասանելի երկկողմ փաստաթղթերի անվանումների ցանկը՝ ըստ ժամանակագրության.

1991 թվական

- ✓ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին

1992 թվական

- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանում տեղակայված ռուսական ձինված ուժերի կազմալուծվող միավորումների և զորամասերի սպառազինությունն ու տեխնիկան Հայաստանին փոխանցելու պայմանների և ժամկետների մասին
- ✓ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի և դրանց գործունեության մասին
- ✓ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության ձինված ուժերի իրավական կարգավիճակի մասին
- ✓ Հյուպատոսական կոնվենցիա Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ազատ առևտրի մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ և ՌԴ միջև սպառազինությունների, ռազմական տեխնիկայի և գույքի մշակման ու արտադրման մասին
- ✓ Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին

1993 թվական

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև բարձրագույն կրթության մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև օդային հաղորդակցության մասին
- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև նախկին ԽՍՀՄ արտաքին պետական պարտքի և ակտիվների նկատմամբ իրավահաջորդության հարցերի կարգավորման մասին

1994 թվական

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների և Ռուսաստանի Դաշնության տարածքում աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին
- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Սահմանապահ զորքերի մասին
- ✓ Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության Սահմանապահ զորքերում զինվորական ծառայության անցնելիս ստանձնվող Պարտավորության տեքստի համաձայնեցման մասին

1995 թվական

- ✓ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմական բազայի մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև մշակույթի, գիտության և կրթության ոլորտներում համագործակցության մասին

1996 թվական

- ✓ Համաձայնագիր հարկային օրենսդրության խախտումների դեմ պայքարի ոլորտում համագործակցության և տեղեկատվության փոխանակման մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 1996-1997թթ. Առևտրատնտեսական համագործակցության մասին
- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության Սահմանապահ զորքերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինվորական ծառայության անցնելու կարգի մասին
- ✓ Արձանագրություն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության Սահմանապահ զորքերում զինվորական ծառայության անցնելիս ստանձնվող Պարտավորության տեքստի համաձայնեցման մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկման վերացման մասին

1997 թվական

- ✓ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին
- ✓ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում մշտապես բնակվող Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների և Ռուսաստանի Դաշնությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավական կարգավիճակի մասին
- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմաբազայի տեղակայման կետերից դուրս ռուսական ռազմաբազայի զինծառայողների կողմից զենք կիրառելու կարգի մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Հայաստանի Հանրապետությանը 1997 թվականին պետական վարկ տրամադրելու մասին

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կամավոր վերաբնակության գործընթացի կարգավորման մասին
- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմաբազայի գտնվելու հետ կապված գործերով փոխադարձ իրավական օգնության տրամադրման հարցերի շուրջ
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Երևան քաղաքում Ռուս-հայկական համալսարանի հիմնադրման և գործունեության պայմանների մասին

1998 թվական

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 1999-2000թթ. Հայաստանի Հանրապետությանը պետական վարկ տրամադրելու մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կառավարական կապի ոլորտում համագործակցության մասին

2000 թվական

- ✓ Հռչակագիր ՀՀ և ՌԴ միջև դաշնակցային փոխհարաբերությունների մասին՝ ուղղված դեպի 21-րդ դար
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների առանց վիզայի փոխադարձ ուղևորությունների մասին
- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համատեղ անվտանգության ապահովման համար զորքերի (ուժերի) կիրառման համատեղ ծրագրման հարցերի շուրջ
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության զանգվածային լրատվամիջոցների թղթակիցների և Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության զանգվածային լրատվամիջոցների թղթակիցների կարգավիճակի մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև փոխադարձ առևտրի ոլորտում հարակից հարկերի գանձման սկզբունքների մասին

2001 թվական

- ✓ Պայմանագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև մինչև 2010 թվականն ընկած ժամանակահատվածում երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին
- ✓ Համաձայնագիր Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) և Հայաստանի Հանրապետության մարզային վարչակազմերի միջև համագործակցության սկզբունքների մասին

2002 թվական

- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմական ենթակառուցվածքների օբյեկտների համատեղ օգտագործման մասին
- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ-ին պատկանող «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի բաժնետոմսերը ՌԴ-ին փոխանցելու մասին
- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ-ին պատկանող «Մարս» ՓԲԸ-ն ՌԴ-ին փոխանցելու մասին
- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ-ին պատկանող «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը ՌԴ-ին փոխանցելու մասին
- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ-ին պատկանող Հրազդանի ՋԷԿ-ի ունեցվածքային համալիրը ՌԴ-ին փոխանցելու մասին
- ✓ Համաձայնագիր ռազմական ոլորտում տեղեկատվական փոխանակման մասին

2004 թվական

- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 1992 թվականի սեպտեմբերի 30-ին կնքված ազատ առևտրի մասին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին
- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության մի-

ջև ազատ առևտրի ռեժիմի առգրավումների փուլային չեղարկման մասին

2007 թվական

- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 2000 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կնքված փոխադարձ առևտրի ոլորտում հարակից հարկերի գանձման սկզբունքների մասին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին

2011 թվական

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ տարածքում առումային էլեկտրակայանի նոր էներգաբլոկների կառուցման գործում համագործակցության մասին
- ✓ Համաձայնագիր դիվանագիտական ներկայացուցչությունների տեղակայման համար անշարժ գույքի փոխադարձ տրամադրման մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Մոսկվայի Համառուսաստանյան ցուցահանդեսային կենտրոնի տարածքում Հայաստանի Հանրապետության «Արմենիա» ցուցահանդեսաառևտրային կենտրոնի ստեղծման մասին
- ✓ Համաձայնագիր հումանիտար ոլորտում համագործակցության մասին

2012 թվական

- ✓ Արձանագրություն ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ՀՀ տարածքում ռուսական ռազմաբազայի տեղակայման կետերի մասին

2013 թվական

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև «Հայոուսգազարդ» ՓԲԸ բաժնետոմսերի առուվաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև բնական գազի մատակարարման գնի գոյացման կարգի մասին

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն բնական գազի, նավթամթերքի և չմշակված բնական ալմաստների մատակարարման ոլորտում համագործակցության մասին
- ✓ Համաձայնագիր քաղաքացիների մնալու կարգի մասին

2014 թվական

- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև Հայկական ատոմակայանի երկրորդ էներգաբլոկի օգտագործման ժամկետի երկարացման հարցում համագործակցության մասին

2015 թվական

- ✓ Համաձայնագիր Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև համատեղ անվտանգության Կովկասյան տարածաշրջանում Հակաօդային պաշտպանության միացյալ տարածաշրջանային համակարգի ստեղծման մասին
- ✓ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև միջուկային վթարների մասին օպերատիվ տեղեկացման և միջուկային ու ռադիոակտիվ անվտանգության ոլորտում տեղեկատվության փոխանակման մասին

2016 թվական

- ✓ Համաձայնագիր տիեզերական տարածքի օգտագործման և հետազոտման ոլորտում համագործակցության մասին

Հայ-ռուսական հարաբերությունների հիմնական տնտեսական ցուցանիշները

Հայ-ռուսական հարաբերությունների տնտեսական բաղադրիչը բավական բազմաշերտ է: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում ռուսական կապիտալով ձեռնարկությունների և առանձին ստորաբաժանումների թիվը շուրջ 1280 էր, ինչը կազմում է Հայաստանում օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ աշխատող ձեռնարկությունների ընդհանուր քանակի 27,6 տոկոսը:

Ռուսական ընկերությունները ներկայացված են Հայաստանի տնտեսության հիմնական ոլորտներում՝ էներգետիկ, հեռահաղորդակցության, բանկային, տրանսպորտային, լեռնահանքարդյունաբերական և այլն:

Ռուսական կապիտալի մասնակցությամբ գործող առավել արդյունավետ ձեռնարկություններից է «Ռուսալ-Արմենալ» ՓԲԸ-ն, որին պատկանում է փայլաթիթեղային «Արմենալ» գործարանի բաժնետոմսերի 100 տոկոսը: Գործարանը Հայաստանի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկություններից է և հանդիսանում է Կովկասում միակ փայլաթիթեղ արտադրողը: Ձեռնարկությունը տարեկան թողարկում է 25 հազար տոննա փայլաթիթեղ:

Ալյումինի արտադրության արդիականացմանն ուղղված ներդրումների ծավալը 2010-2012թթ. կազմել է 100 մլն դոլար, իսկ 2013-2020 թվականներին նախատեսվում է ներդնել ևս շուրջ 20 մլն դոլար:

Զարգանում է հայ-ռուսական համագործակցությունը վառելիքաէներգետիկ համակարգում: Ըստ Հայաստանի տարածքում գազաէներգետիկ նախագծերում «Գազպրոմ» ընկերության մասնակցության մասին համաձայնագրի, «Գազպրոմ» ԲԲԸ-ն «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի (որի 100 տոկոս բաժնետոմսերն այժմ պատկանում են «Գազպրոմ» ԲԲԸ-ին) միջոցով Հայաստանում իրականացնում է խոշոր գազաէներգետիկ նախագիծ: Հայաստանի գազատրանսպորտային համակարգերի զարգացմանն ուղղված ռուսական ներդրումները 2006-2013թթ. կազմել են շուրջ 200 մլն դոլար: Սպասվում է, որ 2014-2019թթ. ընթացքում կկատարվեն ևս 60 մլն դոլարի ներդրումներ:

2008 թվականի հունվարից «Ռուսական երկաթուղիներ» ԲԲԸ-ն (ՌԵՈՒ) իրականացնում է «Հայկական երկաթուղի» ՓԲԸ-ի կոնցեսիոն կառավարումը, այն է՝ 30 տարի ժամկետով, առաջին 20 տարին լրանալուց հետո ևս 20 տարով երկարաձգելու իրավունքով: Ըստ պայմա-

նագրի, ՌԵՈՒ-ն կոնցեսիայի հիմնական ժամկետում Հայաստանի երկաթուղային ենթակառուցվածքի զարգացման համար պետք է ներդնի 400 մլն դոլար, իսկ շարժակազմի թարմացման համար՝ 170 մլն դոլար: Հայկական երկաթուղիների անմիջական կառավարումն իրականացնում է «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է ՌԵՈՒ-ի 100 տոկոսանոց դուստր ձեռնարկությունը: 2008-2013թթ. ՌԵՈՒ-ի ներդրումների ծավալը կազմել է 267 մլն դոլար:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն (այն ժամանակ 100 տոկոսանոց ռուսական կապիտալով ՌԱՕ ԵԷՍ) 2012թ. Հայաստանի էլեկտրացանցների պահպանման և զարգացման համար ներդրել է 20 մլն դոլար, 2013-2018 թվականներին նախատեսվում էր ներդնել շուրջ 250 մլն դոլար: 2017 թվականի ապրիլից ընկերության բաժնետերեր են հանդիսանում ռուսաստանյան «Տաշիր կապիտալ» ընկերությունը՝ 70% բաժնեմասով, և օֆշորային LIORMAND HOLDING LIMITED ընկերությունը՝ 30% բաժնեմասով:

«Միջազգային էներգետիկ ընկերություն» ՓԲԸ-ն (100 տոկոս ռուսական կապիտալով) Սևան-Հրազդան ՀԷԿ-երի կասկադի վերանորոգման համար 2011-2012 թթ. ներդրել է 8,5 մլն դոլար:

100 տոկոս ռուսական կապիտալ ունեցող ընկերություններից է նաև «Գեոպրոմայնինգ գոլդ Հայաստան» ՍՊԸ-ն: 2011-2013թթ. ընկերությունը Սոթքի ոսկու հանքի տեխնիկական բազայի նորացման համար ներդրել է շուրջ 340 մլն դոլար, ինչպես նաև իրականացրել է Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի արդիականացումը:

2011 թվականին ռուսական «Նևա-Ռուս» ընկերությունն Արմանիսի պոլիմետաղական հանքավայրի մոտակայքում կառուցել է լեռնահարստացնող գործարան (100 տոկոս ռուսական կապիտալով): Գործարանի կառուցման համար ներդրվել է 40 մլն դոլար: Մոտակա 2-3 տարում արտադրության զարգացման համար ներդրումները կկազմեն 17-20 մլն դոլար: «Նևա-Ռուս» ընկերությունը պատրաստվում է երկու լեռնահարստացնող գործարան կառուցել Սյունիքի մարզում, ներդրումների ծավալը կկազմի շուրջ 300 մլն դոլար:

Բանկային ոլորտում ակտիվ գործունեություն է ծավալում ՎՏԲ Խումբը: Հայաստանում ՎՏԲ Խմբի առավել խոշոր նախագծերից է մասնակցությունը Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում հանքարդյունաբերության կազմակերպման ծրագրի ֆինանսավորմանը, որի շրջանակներում էլ 2011 թվականի նոյեմբերից սկսվել է ՎՏԲ Խմբի վար-

կային միջոցների օգտագործումը: 2012 թվականի հուլիսի դրությամբ 283.3 մլն դոլար ընդհանուր վարկային սահմանաչափից (12 տարի ժամկետով) օգտագործվել են 87,81 մլն դոլարի վարկային միջոցներ:

«ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲԸ-ն մասնակցում է Հայաստանում մի շարք առաջատար ձեռնարկությունների ֆինանսավորմանը: Մասնավորապես, բանկը մասնակցում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության կոնտրագենտների սպասարկման նախագծի իրականացմանը և ֆինանսավորում է ընկերության ընթացիկ գործունեությունը 9.3 մլն դոլարի չափով: Նշանակալից է նաև «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի ընթացիկ գործունեության և ներդրումային ծրագրի զարգացման ֆինանսավորումը 9 մլն դոլարի չափով: Բանկը համագործակցում է նաև «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի հետ («Գազպրոմ» ԲԲԸ-ի դուստր ձեռնարկություն): «ՎՏԲ բանկ» ՓԲԸ-ն ֆինանսավորել է գազային ընկերությանը ընդհանուր 12,4 մլն դոլարի չափով՝ «Ադիգազ» համալիրի կառուցման նախագծի իրականացումն ավարտին հասցնելու համար:

ՎՏԲ Խումբը հետաքրքրված է Հայաստանի Հանրապետության հետ ներդրումային համագործակցության հետագա զարգացմամբ, մասնավորապես՝ «Զվարթնոց» օդանավակայանի հետագա զարգացման և վերակառուցման ծրագրով, շինարարության ոլորտում նոր նախագծերի իրականացմամբ և խոշոր ենթակառուցվածքային օբյեկտների վերակառուցմամբ:

Մեծ է ռուսական ընկերությունների ակտիվությունը նաև հեռահաղորդակցության ոլորտում: Բջջային կապի հայկական շուկայում ներկայում գործում են ռուսական կապիտալով երկու խոշոր ընկերություններ՝ «Արմենթել» ՓԲԸ-ն (պատկանում է ռուսական «Վիմպելկոմ» ԲԲԸ-ին) և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն (պատկանում է «ՄՏՍ» ԲԲԸ-ին): «Արմենթել» ՓԲԸ-ի ներդրումները Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում ուղղված են ենթակառուցվածքի զարգացմանը, տեխնիկական համալրմանը և Ինտերնետ հաղորդակցության զարգացմանը: Ընկերությունը ներդրել է շուրջ 1,5 մլն դոլար և դարձել է Հայաստանի միակ օպերատորը, որն ունի հինգ ելք Հայաստանից: «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն հանդիսանում է «Ռոստելեկոմ» ԲԲԸ-ի հիմնական գործընկերը Հայաստանում: «Ռոստելեկոմ» ԲԲԸ-ի և «Ղ-Տելեկոմի» միջև ձայնային թրաֆիկի փոխանցման համար կազմակերպվել են թվային հոսքեր Վրաստանի և Իրանի տարածքներով:

Հայ-ռուսական առևտուրը

ՀՀ-ի և ՌԴ-ի տնտեսական հարաբերությունների կարևոր ցուցանիշներ են հանդիսանում երկու երկրների միջև առկա առևտրի ծավալները:


Ռուսաստանի հետ Հայաստանի առևտրի ցուցանիշները (ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալների)

Թվական	Արտահանում (դեպի ՌԴ)	Ներմուծում (ծագման երկիր՝ ՌԴ)
1995	90802,6	-
1996	96141,0	-
1997	62898,5	-
1998	39986,3	-
1999	33855,5	-
2000	44559,9	-
2001	60501,3	-
2002	64634,0	-
2003	94415,6	174907,9
2004	77897,7	159687,2
2005	119004,2	242632,4
2006	121155,6	304170,8
2007	201542,5	720440,4
2008	208174,9	851172,5
2009	107426,3	792241,6
2010	160507,8	835271,7
2011	222273,7	890873,2
2012	279109,0	1057416,4
2013	334125,7	1025159,7
2014	308250,2	1122876,0
2015	244892,8	942384,6
2016	374470,7	983835,4
2017 (հունվար-սեպտեմբեր)	337497,8	736293,3

Ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումները դեպի Հայաստան և անդրսահմանային գործողությունները (ՌԴ Կենտրոնական բանկի՝ 2004-2016թթ. տվյալներով)

Դրամական փոխանցումների համակարգերով Ռուսաստանից կատարված փոխանցումները 2006-2016թթ.

Թվական	Մլն ԱՄՆ դոլար
2006	530500
2007	943400
2008	1249200
2009	848300
2010	1018000
2011	1284400
2012	1449000
2013	1597000
2014	1416000
2015	682000
2016	346216



Ֆիզիկական անձանց կողմից իրականացրած անդրսահմանային գործողություններ


Փոխանցումներ Ռուսաստանից 2006-2016թթ.

Թվական	Մլն ԱՄՆ դոլար
2006	630090
2007	1061910
2008	1411040
2009	944580
2010	1107600
2011	1365700
2012	1602400
2013	1715000
2014	1550000
2015	941000
2016	711476



Դրամական փոխանցումները դեպի Հայաստան՝ ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության (մլն ԱՄՆ դոլար)

Թվական	Մլն ԱՄՆ դոլար
2004	729
2005	846
2006	1078
2007	1491
2008	1781
2009	1286
2010	1484
2011	1761.7
2012	1909.3
2013	2159.6
2014	2025.9
2015	1430.4
2016	1330.1



Միգրացիոն գործընթացներ

Հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների կարևոր բաղադրիչ են հանդիսանում մասնավոր դրամական փոխանցումները: Այս համատեքստում առանցքային դեր է խաղում միգրացիոն գործընթացների դինամիկան: Ստորև ներկայացնում ենք ՌԴ Դաշնային միգրացիոն ծառայության տվյալները՝ սկսած 2011 թվականից

ՌԴ-ում գտնվող ՀՀ քաղաքացիների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

2011 թվական

N	Ցուցանիշներ	Ընդամենը
1.	Ռուսաստանի ԴԽԾ տարածքային մարմիններում հաշվառված ՀՀ քաղաքացիների քանակը	713 272
2.	Ռուսաստանում գտնվելու ժամկետը երկարաձգած ՀՀ քաղաքացիների քանակը	125 232
3.	Ըստ բնակության վայրի գրանցված ՀՀ քաղաքացիների քանակը	86 782
4.	Ժամանակավոր կացության իրավունք ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	53 166
5.	Ռուսաստանում ժամանակավոր բնակվող ՀՀ քաղաքացիների քանակը	112 528
6.	ՀՀ քաղաքացիների քանակը, որոնց նկատմամբ կայացվել է կացության իրավունք տալու որոշում	33 110
7.	Ռուսաստանում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների քանակը (ըստ կացության իրավունքի)	33 392
8.	ՌԴ քաղաքացիություն ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	7 847
9.	Ռուսաստանում ՀՀ քաղաքացիների աշխատանքային գործունեությունը	
9.1	ձևակերպված է աշխատանքի թույլտվություն (հատ)	53 868
9.2	ձևակերպված է որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	268
9.3	ձևակերպված է բարձր որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	39
9.4	տրամադրված պատենտների քանակը	59 127
10.	ՌԴ տարածքում միգրացիոն օրենսդրության ոլորտում վարչական իրավախախտումներ կատարած ՀՀ քաղաքացիների քանակը	33 403

2012 թվական

N	Ցուցանիշներ	Ընդամենը
1.	Ռուսաստանի ԴՄԾ տարածքային մարմիններում հաշվառված ՀՀ քաղաքացիների քանակը	507 493
2.	ՀՀ քաղաքացիների քանակը, որոնց նկատմամբ կայացվել է կացության իրավունք տալու որոշում	21 706
3.	ՌԴ քաղաքացիություն ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	13 176
4.	Ռուսաստանում ՀՀ քաղաքացիների աշխատանքային գործունեությունը	
4.1	ձևակերպված է աշխատանքի թույլտվություն (հատ)	52 600
4.2	ձևակերպված է որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	566
4.3	ձևակերպված է բարձր որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	24
5.	ձևակերպված է աշխատանքի թույլտվություն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների (%)	
5.1	Շինարարություն	52,8
5.2	Ճառայությունների ոլորտ	22,3
5.3	տրանսպորտ և կապ	12,9
5.4	մեծածախ և մանրածախ առևտուր	4,6
6.	մասնավոր անձանց մոտ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար տրված պատենտներ (հատ)	90 500
7.	կրթության համար Ռուսաստան եկած ՀՀ քաղաքացիների քանակը	2 963
8.	ՌԴ տարածքում միգրացիոն օրենսդրության ոլորտում վարչական իրավախախտումներ կատարած ՀՀ քաղաքացիների քանակը	34 975

2013 թվական

N	Ցուցանիշներ	Ընդամենը
1.	Ռուսաստանի ԴՄԾ տարածքային մարմիններում հաշվառված ՀՀ քաղաքացիների քանակը	587 069
2.	Ըստ բնակության վայրի գրանցված ՀՀ քաղաքացիների քանակը	56 435
3.	Ժամանակավոր կացության իրավունք ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	31 127
4.	ՀՀ քաղաքացիների քանակը, որոնց նկատմամբ կայացվել է կացության իրավունք տալու որոշում	19 919
5.	Ռուսաստանում բնակվող ՀՀ քաղաքացիների քանակը (ըստ ժամանակավոր կացության թույլտվության և կացության իրավունքի)	145 122
6.	ՌԴ քաղաքացիություն ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	16 550
7.	Ռուսաստանում ՀՀ քաղաքացիների աշխատանքային գործունեությունը	
7.1	ձևակերպված է աշխատանքի թույլտվություն (հատ)	53 700
7.2	ձևակերպված է որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	3909
7.3	ձևակերպված է բարձր որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	215
8.	մասնավոր անձանց մոտ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար տրված պատենտներ (հատ)	95 800
9.	ՌԴ տարածքում միգրացիոն օրենսդրության ոլորտում վարչական իրավախախտումներ կատարած ՀՀ քաղաքացիների քանակը	30 345

2014 թվական

N	Ցուցանիշները	Ընդամենը
1.	Ռուսաստանի ԴՄԾ տարածքային մարմիններում հաշվառված ՀՀ քաղաքացիների քանակը (հատ)	434 298
2.	Ժամանակավոր կացության իրավունք ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	28 227
3.	ՌԴ քաղաքացիություն ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	11 223
4.	Ռուսաստանում ՀՀ քաղաքացիների աշխատանքային գործունեությունը	
4.1	ձևակերպված է աշխատանքի թույլտվություն (հատ)	63 103
4.2	ձևակերպված է որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	4 911
4.3	ձևակերպված է բարձր որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	249
5.	մասնավոր անձանց մոտ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար տրված պատենտներ (հատ)	153 382
6.	ՌԴ տարածքում միգրացիոն օրենսդրության ոլորտում վարչական իրավախախտումներ կատարած ՀՀ քաղաքացիների քանակը	45 239


2015 թվական

N	Ցուցանիշներ	Ընդամենը
1.	Ռուսաստանի ԴՄԾ տարածքային մարմիններում հաշվառված ՀՀ քաղաքացիների քանակը	362 532
2.	Ժամանակավոր կացության իրավունք ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	9 908
3.	Ռուսաստանում ժամանակավոր բնակվող ՀՀ քաղաքացիների քանակը (ըստ ժամանակավոր կացության իրավունքի)	10 259
4.	ՌԴ քաղաքացիություն ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	8 368
5.	Ռուսաստանի տարածք մտած ՀՀ քաղաքացիների քանակը	365 100

6.	Ռուսաստանի տարածքը լքած ՀՀ քաղաքացիների քանակը	243 600
7.	ՌԴ տարածքում միգրացիոն օրենսդրության ոլորտում վարչական իրավախախտումներ կատարած ՀՀ քաղաքացիների քանակը	9 434
8.	Ռուսաստանում ՀՀ քաղաքացիների աշխատանքային գործունեությունը	
8.1	ձևակերպված է աշխատանքի թույլտվություն (հատ)	52
8.2	ձևակերպված է որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	2
8.3	ձևակերպված է բարձր որակավորված մասնագետների աշխատանքի թույլտվություն (հատ)	7
9.	մասնավոր անձանց մոտ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար տրված պատենտներ (հատ)	114
10.	կրթության համար Ռուսաստան եկած ՀՀ քաղաքացիների քանակը	9 054

2016 թվական

N	Ցուցանիշներ	Ընդամենը
1.	Ռուսաստանի ԴՄԾ տարածքային մարմիններում հաշվառված ՀՀ քաղաքացիների քանակը	
2.	Ժամանակավոր կացության իրավունք ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	21 872
3.	Ռուսաստանում ժամանակավոր բնակվող ՀՀ քաղաքացիների քանակը (ըստ ժամանակավոր կացության իրավունքի)	18 352
4.	ՌԴ քաղաքացիություն ստացած ՀՀ քաղաքացիների քանակը	22 264
5.	Ռուսաստանի տարածք մտած ՀՀ քաղաքացիների քանակը	603 358
6.	Ռուսաստանի տարածքը լքած ՀՀ քաղաքացիների քանակը	-
7.	ՌԴ տարածքում միգրացիոն օրենսդրության ոլորտում վարչական իրավախախտումներ կատարած ՀՀ քաղաքացիների քանակը	1 203





ISBN 978-9939-1-0727-1



9 789939 107271